



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հոդվածի հղումը. Փախյան Ա., Անանյան Ա., Ենգիբարյան Ա. (2024), Ռուսաստանը և տնտեսական պատժամիջոցները. ընթացիկ իրողություններ և հեռանկարներ, *Տնտեսություն և հասարակություն*, ՀՊՏՀ, Տնտեսագետ, 3(6), 71-101, DOI: 10.52174/29538114_2024.3-71

Ներկայացվել է խմբագրություն՝ 15.11.2024 թ.

Ուղարկվել է գրախոսության՝ 18.11.2024 թ.

Երաշխավորվել է հրապարակման՝ 30.12.2024 թ.

ԱՆՆԱ ՓԱԽԼՅԱՆ

ՀՊՏՀ «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի ավագ հեղափոխող,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

 <https://orcid.org/0000-0002-5854-2473>

ԱՆՈՒՇ ԱՆԱՆՅԱՆ

ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների
ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու

 <https://orcid.org/0009-0001-1555-1898>

ԱՆԱՀԻՏ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

ՀՊՏՀ «Մաքսային վարչարարություն» մագիստրոսական
կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանող

 <https://orcid.org/0009-0008-9770-5598>

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ. ԸՆԹԱՑԻԿ

ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Ռուս-ուկրաինական պատերազմի բռնկումը շոշափելի հետևանքներ ունեցավ Ռուսաստանի, ԵԱՏՄ-ի, ԵՄ-ի և առհասարակ համաշխարհային տնտեսության վրա: Վնասները կարելի է համարել երկկողմանի:

Ժամանակակից պայմաններում տնտեսական պատժամիջոցներն արտաքին քաղաքականության կարևոր գործիք են: Պատժամիջոցներն իրենց երկարաժամկետ ազդեցությունն են թողել ոչ միայն Ռուսաստանի առևտրաշրջանառության, այլև ամբողջ տնտեսության վրա: Կարճաժամկետ հեռանկարում արտաքին առևտրի հոսքերի և ներդրումների սահմանափակումները ճնշում են գործադրում ՌԴ տնտեսության վրա:

Միաժամանակ, պատժամիջոցներն ունեն երկկողմանի ազդեցություն: Ռուսաստանի Դաշնությունը տնտեսական և բավականին մեծ սպառողական շուկայի, պատժամիջոցների հետևանքով այս պետությունից հրաժարված բազմաթիվ կառույցներ կորցնում են մեծ սպառողական շուկա, հետևաբար նաև ունենում են շահույթի կրճատում:

Ռուս-ուկրաինական հակամարտության սրումը շարժարագ կերպավորվեց ԵՄ էներգետիկ ոլորտի հետ կապված բոլոր պլանները և վարած քաղաքականությունը: Հետևաբար՝ Ռուսաստանը պետք է ցանկացած պահի պատրաստ լինի կայունացնել փոփոխությունների: Երկիրը պետք է փնտրի ԵՄ շուկաներին փոխարինող տարբերակներ, որպեսզի կարողանա պահպանել և ավելացնել նավթի, գազի արտահանման ծավալները:

Հոգվածի շրջանակներում ուսումնասիրվել են պատժամիջոցները, գնահատվել է դրանց ազդեցությունը Ռուսաստանի տնտեսության վրա՝ բացահայտելով, թե դրանք ինչ փակուղիների առջև են կանգնեցրել ՌԴ-ին:

Հիմնաբառեր. ներկրում, արտահանում, փոխարժեք, պատժամիջոցներ, էներգետիկներ, փակուղի

JEL: E60, O10

DOI: 10.52174/29538114_2024.3-71

Ներածություն: Թեև Արևմուտքի կողմից պատժամիջոցները Ռուսաստանի դեմ կիրառվում են դեռևս 2014 թ-ից, 2022 թ. մարտի 7-ին Ռուսաստանը դարձավ առաջատարը համաշխարհային պատժամիջոցների քանակով՝ առաջ անցնելով մինչ այդ տասնամյակներ շարունակ պատժամիջոցների պայմաններում զարգացող Իրանի Իսլամական Հանրապետությունից և հայտնվելով նոր մարտահրավերների կիզակետում:

Այդուհանդերձ, տեղի ունեցող իրադարձությունների հատկանշականությունը դրանց երկկողմանի բնույթն է. 2022 թ. փետրվարի վերջին և մարտի սկզբին ռուս-ուկրաինական պատերազմի բռնկման հետևանքով հայտարարված պատժամիջոցները զուգակցվեցին ՌԴ տնտեսությունից միջազգային մի շարք կազմակերպությունների և ներդրողների (Mercedes, Toyota, BMW, Airbus, Boeing, Samsung, IKEA, Coca-cola, Pepsi, Macdonalds, ZARA, KFC, Mango և այլն) արտահոսքով: Սա վկայում է երկակի ազդեցության մասին՝ ՌԴ-ն դադարում է ունենալ ներդրումային գրավչություն, իսկ այս կազմակերպությունները կորցնում են բավականին մեծ սպառողական շուկա: ՌԴ-ում արգելվեց ԱՄՆ դոլարով գործարքներ իրականացնել, իսկ արտարժույթով բանկային ավանդներ ունեցողները բախվեցին խնայողությունների ձեռքբերման սահմանափակումների և արգելքների:

Երկրագնդի ցամաքային տարածքի 1/8 մասը զբաղեցնող Ռուսաստանն աշխարհում առաջին տեղում է գազի պաշարներով (համաշխարհային պաշարների 32%-ը), նավթի արդյունահանմամբ երկրորդն է (համաշխարհային արդյունահանման 10%-ը), երրորդը՝ ածխի պաշարներով¹: Ռուսաստանը մեծապես կախված է նավթից և բնական գազից ստացվող եկամուտներից, որոնք 2021 թվականին կազմում էին Ռուսաստանի դաշնային բյուջեի 45%-ը²:

¹ St'u Natural Resources, Economy of Russia, <https://www.advantour.com/russia/economy/natural-resources.htm>

² St'u IEA (2022), Energy Fact Sheet: Why does Russian oil and gas matter? IEA, Paris, <https://www.iea.org/articles/energy-fact-sheet-why-does-russian-oil-and-gas-matter>, Licence: CC BY 4.0

Սա, անշուշտ, վերաճնում է իրերի դրվածքն այնքանով, որքանով արտաքին աշխարհի համար կարևորվում է Ռուսաստանի ռեսուրսային ներուժը:

Ընդհանուր առմամբ, Ռուսաստանի տնտեսությունը 2022 թ. իր դեմ սահմանված պատժամիջոցների հետևանքով բախվել է մի շարք մարտահրավերների՝ ենթարկվելով արտաքին ցնցումների ազդեցությանը:

Թեև Ռուսաստանի տնտեսության հնարավոր զարգացումների և մարտահրավերների, արտահանման և ներկրման հնարավոր սահմանափակումների և խնդիրների ուսումնասիրությանը նվիրված են բազմաթիվ աշխատություններ, իրադարձությունների զարգացմանը համընթաց, թեման շարունակում է մնալ արդիական:

Գրականության ակնարկ: 2020 թ. վերջին և 2021 թ. սկզբին Ռուսաստանում COVID-19 համավարակի սահմանափակումները մեղմվեցին, երկրորդ կիսամյակում սպառողների պահանջարկն առաջընթաց գրանցեց՝ 2020 թ. կուտակված խնայողությունների և վարկերի արագ աճի հաշվին³: Ռուսաստանում ներդրումներն այդ ընթացքում նույնպես աճ գրանցեցին: Սակայն աշնանը համավարակի նոր ալիքը դանդաղեցրեց ՌԴ տնտեսության զարգացման տեմպերը: Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի դոցենտ, տնտեսագիտության դոկտոր Սերգեյ Դուբինին իր հրապարակումներից մեկում իրավիճակը նկարագրել է հետևյալ կերպ. «21-րդ դարի երկրորդ տասնամյակի սկզբին Ռուսաստանի տնտեսությունը բախվեց մի շարք արտակարգ իրավիճակների և մարտահրավերների: 2020–2021 թթ. COVID-19 համավարակն աննախադեպ մասշտաբ հաղորդեց կառավարության սահմանափակող սանիտարական միջոցառումներին: 2022 թվականին Ուկրաինայում ռազմական հատուկ գործողությունները նույնպես ստեղծեցին այնպիսի մի իրավիճակ, որն անսպասելի էր տնտեսագետների և տեսաբանների մեծամասնության համար»⁴: Նա համարում է, որ այդ դրամատիկ իրադարձությունները բնորոշվում են ընդհանուր բնութագրիչներով՝ ՀՆԱ աճի դանդաղում կամ անկում, համաաշխարհային տնտեսության զարգացման ուղեծրի և առաջնահերթությունների փոփոխություն, տասնամյակներով ձևավորված համաաշխարհային աշխարհակարգի ձևախեղում միջազգային կառույցների դերի և ազդեցության թուլացմամբ:

«Էքսպերտ ՌԱ» գործակալությունը 2022 թվականի առաջին կիսամյակի արդյունքներով գնահատել է բանկային համակարգի կայունությունը ճգնաժամային պայմաններում: Ուսումնասիրությունը կատարվել է գործող բիզնես մոդելների շրջանում: Հետազոտության օբյեկտ են հանդիսացել բարձր վարկանիշ ունեցող 129 բանկ, որոնց մասնաբաժինն ամբողջ բանկային հատվածի ակտիվներում 01.01.2022 թ. դրությամբ կազմել է 82%: Առավելագույն կորուստներ և ցուցանիշների վատթարագույն դինամիկա արձանագրվել է խոշոր բիզնեսների հետ աշխատող բանկերում, իսկ ՓՄՁ-ների հետ աշխատող ֆինանսական հաստատություններն այդ պահին համեմատաբար կայուն էին:

³ St' u Russia: Economic Report, <https://www.worldbank.org/en/country/russia/publication/rer>

⁴ Дубинин С.К., Финансовая система под давлением санкции: логика противостояния // Россия в глобальной политике. Т. 20. No. 5. 2022, DOI: 10.31278/1810-6439-2022-20-5-168-187, с. 168-187, <https://globalaffairs.ru/articles/logika-protivostoyaniya/>

Պատճառն այն է, որ բազմաթիվ ֆինանսական առաջատարներ ընդգրկվեցին պատժամիջոցների ցուցակներում, սառեցվեցին նրանց ակտիվները, ավանդատուները մատնվեցին խուճապի, իսկ բանկերն այդ խուճապի ֆոնին ունեցան նշանակալի ֆինանսական արտահոսքեր: Գործակալությունը կանխատեսել է ֆինանսական համակարգի փոխակերպում, որտեղ ամբողջ շուկայի համար առանցքային դեր կստանա ՓՄՁ-ների զարգացումը: Պատժամիջոցներին դիմակայման պայմաններում տնտեսության հետագա զարգացումը հենվում է սեփական ներուժի վրա և պայմանավորվում ներմուծվող ապրանքների փոխարինմամբ, տեղական արտադրանքի ընդլայնմամբ:

Մակրոտնտեսական շուկի ֆոնին վարկային պորտֆելներն աճել են միայն մանրածախ բիզնեսի շրջանում: Բիզնեսների հեռանկարների բարձր անորոշության մակարդակը կորպորատիվ հաճախորդների հետ աշխատող բանկերին ստիպեց հրաժարվել երկարաժամկետ վարկերից, փոխարենն առաջարկվեցին կարճաժամկետ վարկեր: Այսպիսով՝ 2022 թվականի առաջին կիսամյակում խոշոր բիզնեսում մասնագիտացած բանկերի վարկային պորտֆելը նվազել է 3%-ով, իսկ ՓՄՁ-ների հետ աշխատող բանկերինը՝ 0,5%-ով⁵: Գործակալության կատարած կանխատեսումները բավականին մոտ են իրականությանը, ցուցանիշները վկայում են, որ Ռուսաստանի համար այս պահին հիմնաքար կարող են հանդիսանալ ՓՄՁ-ները և սեփական արտադրության զարգացումը:

Որոշ տեսաբանների կարծիքով՝ Ռուսաստանի տնտեսությունը կփլուզվեր նույն տարվա գարնանը, սակայն փաստերը վկայում են, որ ՌԴ տնտեսությունը կարճաժամկետում բավականին կայուն էր: Այժմ կանխատեսումների ազդեցության ամենահավանական զարգացումն անկումն է երկարաժամկետում: Պատժամիջոցները տնային տնտեսությունների վրա ազդում են տարբեր կերպ՝ որոշները ճգնաժամին չեն կարողանում դիմակայել, իսկ որոշների համար պայմանները հաղթահարելի են: Սրա մասին վկայում են բանկային համակարգում տեղի ունեցող փոփոխությունները: Պատժամիջոցներն այնքան ընդգրկուն են, որ Չիկագոյի համալսարանի պրոֆեսոր, Հնդկաստանի կենտրոնական բանկի նախկին նախագահ Ջրահորատ Աղջանը դրանք անվանում է «զանգվածային ոչնչացման զենք» և կոչ անում ապագայում դրանց կիրառման կանոնակարգման մասին մտածել⁶: Մեկ այլ մոտեցմամբ՝ պատժամիջոցները սովորաբար գտնվում են դիվանագիտության և պատերազմի միջև՝ քողարկված մարդասիրական և խաղաղասիրական կոչերով⁷: Ռուս տնտեսագետ Սերգեյ Ագուլիսի կարծիքով՝ պատժամիջոցները «իրադարձությունների աղետալի զարգացում չեն, այլ բավականին մեծ հարված Ռուսաստանի տնտեսությանը»⁸: Դեռևս ռուս-ուկրաինական բախումների մեկնարկային փուլում տեսաբաններ Գուրգեն ու Իշխողին կանխատեսում էին,

⁵ St'u АО «Эксперт РА», Итоги банковского сектора за 1-е полугодие 2022 года: к чему приведет трансформация? էջ 2-4, https://www.raexpert.ru/researches/banks/bank_1h2022/

⁶ St'u Can Sanctions Really Stop Putin? The New York Times, April, 2022, <https://www.nytimes.com/2022/04/22/opinion/sanctions-russia-ukraine-war.html>

⁷ St'u **Пахлян А.А.**, Экстремизм в мировой экономике: жизнь, «погруженная» в санкции // «Амберд» бюлетень, № 5(18), 2022, էջ 78-89, DOI: 10.52174/2579-2989_2022.5-78, <https://asue.am/upload/files/amberd/2022-year-5/10.pdf>

⁸ St'u Can Sanctions Really Stop Putin? The New York Times, April, 2022, <https://www.nytimes.com/2022/04/22/opinion/sanctions-russia-ukraine-war.html>

որ ռուսական նավթի և գազի վրա էմբարգո կլինի «Ուկրաինայում Պուտինի պատերազմի դադարեցման ամենաարագ ճանապարհը»⁹: Բազմաթիվ ար-Տասա հմանյան ընկերություններ դադարեցրել են իրենց գործունեությունը Ռուսաստանում, շուրջ 200,000 մարդ կանգնած է աշխատանքը կորցնելու վտանգի առաջ¹⁰: Շատ քիչ ժամանակ անց քննարկումների առարկա դարձան ռուսական նավթի՝ շրջակա միջավայրին հասցված վնասները: Ռուսական նավթն ավելի ծանր է, քան ՕՊԵԿ-ի կամ ԱՄՆ-ի նավթի մեծ մասը, ինչը նշանակում է, որ այն արտադրում է ավելի շատ ածխաթթու գազ մեկ միավոր էներգիայի դիմաց: Դա նաև պարունակում է մեծ քանակությամբ ծծումբ՝ տհաճ աղտոտիչ: Հետևաբար՝ ռուսական նավթի արդյունահանման կրճատումը կնպաստի գլոբալ աղտոտման խնդրի լուծմանը: Կմշակվեն ավելի մաքուր այլընտրանքային միջոցներ: Սա ևս մեծ հարված էր Ռուսաստանի տնտեսությանը:

Սակայն Արևմուտքի կողմից կիրառված պատժամիջոցներն ունեն նաև որոշակի «սողանքներ», որոնք հիմնականում վերաբերում են էներգետիկայի ճյուղին: Օրինակ՝ ԵՄ-ն պատժամիջոցներում ընդգրկել է սահմանափակումներ պետական բանկերի նկատմամբ, սակայն չի ընդգրկել գազի համար վճարումներ ապահովող Գազպրոմբանկը: Այսկերպ ԵՄ-ն փորձում է իրեն ապահովագրել անցանկալի իրավիճակներից, օրինակ՝ գազի ամբողջությամբ անջատում ամբողջ ԵՄ տարածքում: Չնայած ԵՄ-ն ունի այլընտրանքներ, բայց դրանք ժամանակատար և ծախսատար են: Պատժամիջոցների և ՌԴ տնտեսության վատթարացման ֆոնին Եվրոպան այս պահին գտնվում է էներգետիկ ճգնաժամի շեմին: Financial Times-ի նախկին լրագրող Վոլֆգանգ Մյունհաուն ճգնաժամը դիտարկել է որպես փոխկապակցված երկու գործընթաց, որոնք ունեն տարբեր պատճառներ, բայց, համապատասխանաբար, լրացնում են միմյանց: Պարզության համար ճգնաժամը կարելի է համարել գազային, որի կենտրոնում Գերմանիան է, մյուս ճգնաժամն ատոմայինն է, որը սպառնում է Ֆրանսիային: Ֆրանսիայի միջուկային էներգիայի ներուժը ծառայեց որպես Հյուսիսարևմտյան Եվրոպայի էներգետիկ անվտանգության հենապուն, որն էլ հնարավորություն տվեց Ֆրանսիային՝ դառնալու ԵՄ-ում էներգիայի ամենամեծ արտահանողը: Սակայն Electricité de France-ի ծերացող ռեակտորների պահպանման խնդիրը և ամռանը ջերմաստիճանի կտրուկ բարձրացումը, կարծես, «դավադրություն» լինեին (նվազեց ռեակտորների արտադրողականությունը): 2022 թվականի առաջին կիսամյակում Ֆրանսիայի միջուկային էներգիայի արտադրությունը նվազել է 15%-ով՝ EDF-ին հասցնելով ռեկորդային զուտ վնաս՝ 5,3 միլիարդ եվրոյի չափով¹¹: Էլեկտրաէներգիայի ներմուծման անհրաժեշտությունը հանգեցրեց Գերմանիայում և Մեծ Բրիտանիայում գազի ավելի մեծ սպառման, որն էլ ավելի խորացրեց գազի ճգնաժամը:

Վերլուծաբանների գնահատականներն ու կանխատեսումները ցույց են տալիս, որ Գերմանիան կարող է կորցնել ՀՆԱ մինչև 3%-ը ռուսական նավթի

⁹ St'u Pestova A., Mamonov M., Ongena S., The price of war: Macroeconomic effects of the 2022 sanctions on Russia/ 15 April 2022, <https://voxeu.org/article/macroeconomic-effects-2022-sanctions-russia>

¹⁰ Can Sanctions Really Stop Putin? The New York Times, April, 2022, <https://www.nytimes.com/2022/04/22/opinion/sanctions-russia-ukraine-war.html>

¹¹ St'u Мюнхай В., Энергетический кризис: простого выхода нет. М., 29.09.2022, <https://globalaffairs.ru/articles/energeokrizis-vyhoda-net/>

և գազի ներմուծման ամբողջական էմբարգոյի դեպքում¹²: Մյուսները պնդում են, որ հանածո վառելիքի արտահանման արգելքը բացասական ազդեցություն կունենա Ռուսաստանի տնտեսության վրա:

Ռուսաստանի տնտեսության պատժամիջոցների տնտեսական հետևանքների՝ կառուցվածքային վեկտորային ավտոռեգրեսիոն մոդելի կիրառմամբ առավել վաղ կատարված հետազոտությունները ցույց էին տվել, որ արդյունաբերական արտադրության, սպառման և ներդրումների նվազման պատճառով Ռուսաստանի ՀՆԱ-ն 2022 թվականին կնվազի -12,5%-ից մինչև -16,5%-ով¹³:

ԱՄՀ World Economic Outlook (WEO) 2024 թվականի հոկտեմբերի գեկույցը կանխատեսում է, որ 2024 թվականին Ռուսաստանի ՀՆԱ աճը կկազմի 3,2%, ինչն ավելի վաղ կատարված գնահատականների համեմատությամբ վերանայվել և բարելավվել 0,6 տոկոսային կետով: Այս աճի տեմպերը Ռուսաստանին մի քանի խոշոր տնտեսություններից առաջ են մղում. ԱՄՆ (2,8%), Մեծ Բրիտանիա (1,1%), Գերմանիա (0,0%) և Ֆրանսիա (1,1%)¹⁴: Մոսկվան շարունակում է դիմակայել արևմտյան երկրների կողմից իր դեմ սահմանված տնտեսական պատժամիջոցներին՝ անկախ տարաբնույթ այն շահարկումներից, թե արդյոք Ռուսաստանի տնտեսությունը կարող է շարունակել դիմակայությունը պատժիչ միջոցների այս շարքին և պահպանել աճի նախկին հետադիժը առաջիկա մի քանի տարիների ընթացքում¹⁵:

ԵՄ-ում շարունակվում են քննարկումները ռուսական նավթի արտահանման արգելքի շուրջ: Չինացի նշանավոր նավթագործներից մեկը՝ Ֆու Չենյու-մեն, ով տարբեր ժամանակներում գլխավորել է խոշորագույն ազգային ընկերություններ, ինչպիսիք են՝ CNOOC-ը և Sinopec-ը, համարում է, որ ԵՄ-ի կիրառած պատժամիջոցները ՌԴ-ի դեմ կարելի է համարել ինքն իր դեմ կիրառված¹⁶: Մասնագետի կարծիքով՝ նույնիսկ գների անկման դեպքում երբեք չեն կարող վերադառնալ նախկին մակարդակին: Ռուսաստանում նավթի արդյունահանումը, իհարկե, կնվազի, իսկ կարգավորման համար կպահանջվի մեկից երկու տարի: Ռուսաստանի համար բավականին մեծ սպառող կարող է լինել Ասիան, բայց վերջինս ամբողջովին չի կարող փոխարինել եվրոպական շուկաներին: Ռուսաստանը պետք է փորձի գտնել նոր ճանապարհներ, որպեսզի նավթի սպառողական շուկան էլ ավելի մեծանա:

Դ. Հախվերդյանի և Ա. Փախյանի համոզմամբ՝ այդ հետևանքները բազմակողմանի են, բազմաշերտ և կարող են դրսևորվել 4 հիմնական ուղղություններով՝ պատժամիջոցների ենթարկված երկրի կրած կորուստներ, պատժա-

¹² Տե՛ս **Bachmann R., Baqaee D., Bayer C., Kuhn M., Löschel A., Moll B., Peichl A., Pittel K. and Schularick M.** (2022). What if? The Economic Effects for Germany of a Stop of Energy Imports from Russia, ECONtribute Policy Brief No. 028

¹³ Տե՛ս **Pestova A., Mamonov M., Ongena S.**, The price of war: Macroeconomic effects of the 2022 sanctions on Russia/ 15 April 2022, <https://voxeu.org/article/macroeconomic-effects-2022-sanctions-russia>

¹⁴ Տե՛ս International Monetary Fund. 2024. World Economic Outlook: Policy Pivot, Rising Threats. Washington, DC. October, էջ 32-35:

¹⁵ Տե՛ս International Banker, Sanctions notwithstanding, Russia's economy continues to outperform, 31.10.24, <https://internationalbanker.com/finance/sanctions-notwithstanding-russias-economy-continues-to-outperform/>

¹⁶ Տե՛ս **Ченьюй Фу**, У России появилась хорошая возможность сбалансировать свою экономику, М., 19.05.2022, <https://globalaffairs.ru/articles/sbalansirovat-ekonomiku/>

միջոց կիրառող երկրների կրած կորուստներ, համաշխարհային տնտեսական աճի դանդաղում և պատժամիջոցները շրջանցելու նպատակով միջնորդ երկրների դերի բարձրացում¹⁷: Ընդհանրապես, մասնագիտական շրջանակներում կարծիք կա, որ պատժամիջոցների նման լայնածավալ կիրառումը հրահրում է կառուցվածքային տեղաշարժեր համաշխարհային տնտեսության մեջ, երբ, հատկապես, հումքային ռեսուրսների և ռազմավարական ապրանքների խոշոր համաշխարհային մատակարար երկրներն են ենթարկվում համակարգված սահմանափակումների:

Հետազոտության մեթոդաբանություն: Ռուսաստանի շուրջ ձևավորված իրավիճակի ուսումնասիրությունը ենթադրում է բազմաթիվ տնտեսական և սոցիալական ցուցանիշների վերլուծություն և դրանց միջև փոխհարաբերությունների ու կապերի բացահայտում:

Ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են Ռուսաստանի նկատմամբ կիրառվող սահմանափակումների և դրանց հետևանքների ուսումնասիրությանը նվիրված արտասահմանյան, ինչպես նաև հայկական որոշ գիտական աշխատություններ, հոդվածներ և վերլուծականներ: Ուսումնասիրությունների շրջանակում կիրառվել են երկրորդային տվյալներ:

Հետազոտության ընթացքում կիրառվել են համեմատական, դիալեկտիկայի, վերլուծության և համադրության, մակաժության և արտաժման, պատմական և տրամաբանական զուգակցման, մաթեմատիկական, վիճակագրական և դինամիկայի մեթոդները: Համեմատական մեթոդը հետազոտությունում ամենահաճախ օգտագործվողներից է՝ պայմանավորված հիմնախնդրի բնույթով, ինչը ենթադրում է տարբեր տարիներին կամ ամիսներին արձանագրված ցուցանիշների համեմատություն՝ դրանց աճ կամ անկում վերագրելու նպատակով:

Հետազոտությունում դիալեկտիկայի մեթոդի կիրառումը հնարավորություն է տվել երևույթները դիտարկելու անընդհատ շարժման և դինամիկայի մեջ՝ դրանց շարժընթացն ու փոփոխությունն ավելի լավ հասկանալու համար: Միևնույն ժամանակ, մեթոդը դիտարկում է երևույթների միջև գոյություն ունեցող կապերը՝ բացատրելով՝ ինչպես է ցուցանիշներից մեկի փոփոխությունն ազդում մյուսի կամ մյուսների վրա:

Քանակական վերլուծության գործիքակազմը, ներառյալ՝ վիճակագրական և կառուցվածքային վերլուծության մեթոդները, թույլ է տվել բացահայտել պատժամիջոցների հետևանքով Ռուսաստանի մի շարք ցուցանիշների դինամիկան, կառուցվածքը, դրանց հիման վրա տրվել են նաև որակական գնահատականներ: Բոլոր քանակական ու որակական վերլուծությունների արդյունքները հիմնված են հավաստիության, ամբողջականության, համադրելիության և ճշգրտության մեթոդաբանական սկզբունքների վրա:

Հետազոտության վերլուծության բաժնում ներառված գծապատկերները, որոնք հնարավորություն են տվել ակնառու կերպով դիտարկելու փոփոխությունը, կազմվել են հեղինակների կողմից՝ հասանելի միջազգային վիճակա-

¹⁷ St' u Hakhverdyan D., Pakhlyan A., Coordinated Sanctions in the Orbit of Transformation of the Global Economy / International Conference Materials "PRIORITIES AND CHALLENGES OF ECONOMIC DEVELOPMENT", Yerevan 2024, էջ 21-36, <https://asue.am/upload/files/science/ASECU-git.pdf>

գրական շտեմարանների հիման վրա:

Վերլուծություն: 21-րդ դարում Ռուսաստանի պես մեծ և կայուն տնտեսությանը թվում էր, թե ոչինչ չի կարող ծնկի բերել երկիրը, բայց իրադարձությունները բոլորովին այլ ընթացք ունեցան՝ մի շարք ուղղություններով Ռուսաստանին կանգնեցնելով փակուղու առջև:

2020 թ. շոկային էր համաշխարհային շուկայի, այդ թվում՝ ՌԴ տնտեսության համար: Համավարակի ավերիչ ազդեցությունները դեռևս չէին չեզոքացել, երբ սկսվեց պատերազմը: Պատժամիջոցների նոր բռնկումը երկար չսպասեցրեց: 2022 թ. փետրվարի 22-ի իրադարձությունների հետևանքով Ռուսաստանը դարձավ առաջատարը համաշխարհային պատժամիջոցների քանակով՝ շեշտակիորեն առաջ անցնելով Իրանից: 2024 թ. օգոստոսի 2-ի դրությամբ Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների ընդհանուր թիվը հասել է 22230-ի, որից 19535-ը 2022 թ. փետրվարի 22-ից հետո սահմանվածներն են¹⁸: Ռուսաստանի նկատմամբ 2014–2022 թթ. կիրառված պատժամիջոցները կապված էին Ղրիմի՝ Ռուսաստանին միանալու և Ուկրաինայի արևելքում հակամարտության հետ: Երկրները մինչ այս պահը չեն դադարում նոր սահմանափակումներ կիրառել Ռուսաստանի դեմ: Թեև Ռուսաստանի հանդեպ պատժամիջոցների սահմանման առաջամարտիկը ԱՄՆ-ն է (5820 պատժամիջոց՝ 2024 թ. օգոստոսի 2-ի դրությամբ կամ 2014 թ-ից ի վեր սահմանվածների 26.2%-ը), վերջինիս ջանում են չզիջել նաև Կանադան (3630 պատժամիջոց) և Շվեյցարիան (3009 պատժամիջոց): Երեքը միասին կիրառում են ՌԴ-ի հանդեպ սահմանված պատժամիջոցների 56%-ը: Մնացած 44%-ը բաժին է ընկնում ԵՄ-ին, Միացյալ Թագավորությանը, Ավստրալիային և Ճապոնիային¹⁹:

Առանձին երկրների մակարդակով ևս կիրառվել են տնտեսության համար առանցքային ազդեցություն ենթադրող թիրախային միջոցառումներ: Գերմանիան կասեցրեց դեռևս 2021 թ. սեպտեմբերից շահագործման պատրաստ «Հյուսիսային հոսք-2» մայրուղային գազատարի հավաստագրումը: ԱՄՆ-ն դադարեցրեց ռուսական ընկերությունների հետ դոլարով, եվրոյով, ֆունտով և իենով հաշվարկների ու գործարքների իրականացումը, սահմանափակեց բարձր տեխնոլոգիական արտադրանքների ներմուծումը և արտահանումը, վերահսկողություն սահմանեց նավթագազային սարքավորումների արտահանման նկատմամբ: Կանադան հայտարարեց ռուսական նավթի գնումներից հրաժարվելու մտադրության, ապա նաև իր երկրի նավահանգիստներ և ներքին ջրեր մուտք գործելու արգելքի մասին: Ճապոնիան արգելեց մուտքի արտոնագրերի տրամադրումը ՌԴ որոշ քաղաքացիների, ստեղծեց իր ակտիվները: Պատժամիջոցների տակ հայտնվեցին նաև այն ապրանքները, որոնք կարող են օգտագործվել ռազմական նպատակներով: Մեծ Բրիտանիան ՌԴ իշխանությունների հետ անմիջական կապ ունեցող ռուս մեծահարուստներին ընդգրկեց սև ցուցակում, փակեց իր ծովային նավահանգիստները և արգելեց բոլոր տեսակի բարձր տեխնոլոգիաների արտահանումն ու ներկրումը²⁰:

¹⁸ St'u Russia Sanctions Dashboard, <https://www.castellum.ai/russia-sanctions-dashboard>

¹⁹ St'u նույն աղբյուրը:

²⁰ St'u CNN Business, The list of global sanctions on Russia for the war in Ukraine,

Միաժամանակ, համակարգային սահմանափակումներ են կիրառվում միջազգային կառույցների կողմից: Համաշխարհային բանկը դադարեցրեց իր բոլոր ծրագրերը Ռուսաստանում և Բելառուսում: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը վերջնականապես դադարեցրեց Ռուսաստանի անդամակցության գործընթացը՝ միևնույն ժամանակ հրաժարվելով կնքել նոր պայմանագրեր և իրականացնել չսկսված նախագծերը ՌԴ-ի հետ:

Ռուսաստանի Դաշնության և Եվրամիության երկրների տնտեսությունների միջև գոյություն ունի որոշակի «փոխկապվածություն»: Ռուսաստանը կախված է Եվրամիության արտադրության եկամուտներից, իսկ վերջինս էլ, իր հերթին՝ Ռուսաստանի էներգետիկ ռեսուրսների մատակարարումից:

Պատժամիջոցների ոլորտային ընդգրկման ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք ուղղված են ռուսական տնտեսության հիմնական մրցակցային ոլորտների՝ նավթի, գազի, բանկային համակարգի դեմ: ԱՄՆ-ն, ԵՄ-ն և որոշ երկրներ պատժամիջոցներ են կիրառում Ռուսաստանի նկատմամբ՝ նպատակ ունենալով գրավելու համաշխարհային շուկաները, մասնավորապես՝ էներգետիկ շուկաները և, Ռուսաստանին պարտադրելով բարձրացնել ռազմական ծախսերի մակարդակը, ընդլայնելու ՆԱՏՕ-ի հետ զինված դիմակայության մասշտաբները և այլն: Սակայն իրականացվող բոլոր գործողություններն ունեն երկկողմանի ազդեցություն. պատժամիջոցները միայն Ռուսաստանի տնտեսությունը չեն ենթարկում դեֆորմացման, ձևախեղվում է ամբողջ համաշխարհային տնտեսությունը: Այս ամենը հանգեցնում է ՌԴ առևտրաշրջանառության կրճատման:

Ստեղծված իրավիճակում Ռուսաստանի համար հույժ կարևոր է, օգտվելով մի շարք հումքային ռեսուրսների շուկաներում առանցքային մատակարարի դիրքից, պատժամիջոցներ կիրառող երկրների նկատմամբ գործադրել մատակարարման փոխադարձ սահմանափակումներ, որոնց չեղարկման կամ մեղմացման նախապայմանը կարող է դառնալ ՌԴ-ի համար կարևորագույն ապրանքների ներկրման հնարավորությունը:

ՌԴ-ն, լինելով ռեսուրսային հարուստ երկիր, վերջին տարիներին զարգանում է վերոգրյալ պատժամիջոցների ազդեցության ներքո: Երկրից արդյունահանվում են բավականին մեծ ծավալով ռեսուրսներ, այդ թվում՝ հում նավթ, բնական գազ, ածուխ: 2021 թվականին ռուսական հում նավթի և խտանյութի (կոնդենսատի) արդյունահանումը հասել է օրական 10,5 մլն բարելի, ինչը կազմում է համաշխարհային մատակարարումների 14%-ը: 2021 թվականին Ռուսաստանն աշխարհի երկրներ օրական արտահանել է մոտ 4,7 միլիոն բարել նավթ, միաժամանակ, Եվրոպա է արտահանել օրական 750,000 բարել դիզելային վառելիք՝ բավարարելով վերջինիս պահանջարկի 10%-ը²¹:

Նախապատերազմյան 2021 թվականին ՌԴ-ն գրանցեց իր ընթացիկ հաշվի ամենամեծ ավելցուկը և արտահանման բարձր ցուցանիշ՝ 550 միլիարդ

<https://edition.cnn.com/2022/02/25/business/list-global-sanctions-russia-ukraine-war-intl-hnk/index.html>

²¹ St'u IEA (2024), Average Russian oil exports by country and region, 2021-2023, IEA, Paris, <https://www.iea.org/data-and-statistics/charts/average-russian-oil-exports-by-country-and-region-2021-2023>, Licence: CC BY 4.0

ԱՄՆ դոլար, որից նավթի և գազի արտադրանքը կազմում էր միայն կեսը՝ համաձայն պաշտոնական վճարային հաշվեկշռի տվյալների: Ռուսաստանի կողմից իրականացվող սննդամթերքի, գյուղատնտեսության, փայտի և թղթի արտահանման սահմանափակումներն ավելի քիչ բաժին ունեն առևտրային հաշվեկշռում: դրանք կազմում են ընդհանուր արտահանման 10%-ը²²: «Դրուժբա» խողովակաշարով ռուսական նավթի մատակարարումները եվրոպական երկրներ 2023 թ. փետրվարին, 2022 թ. փետրվարի համեմատությամբ, նվազել են շուրջ երեք անգամ, մինչ այդ, 2022 թ. նավթամուղով նավթի արտահանումն աճել է 7%-ով՝ հասնելով 38,4 միլիոն տոննայի²³: «Դրուժբա» նավթամուղը սկիզբ է առնում Սամարայի մարզից, Բելառուսի տարածքում բաժանվում է երկու ճյուղի: Հյուսիսային ճյուղն անցնում է Լեհաստանով մինչև Գերմանիա, իսկ հարավայինը՝ Ուկրաինայով մինչև Հունգարիա, Սլովակիա և Չեխիա:

ՌԴ ֆինանսների նախարարության տվյալներով 2021 թ. նավթային և գազային եկամուտները բյուջեում կազմել են 9 տրիլիոն ռուբլի, որը բյուջեի ընդհանուր եկամուտների շուրջ 36% տոկոսն է: 2020 թ. համավարակի ֆոնին այս ոլորտների մասնաբաժինը բյուջեում կազմել է 26%, նախաճգնաժամային 2019 թ.՝ 39%²⁴:

Ռուսաստանի տնտեսությանը և առևտրաշրջանառությանը մեծ հարված հասցրին նավթի համաշխարհային ցածր գները: Հում նավթի գների կտրուկ տատանումներն ու փոփոխությունները, անխոս, որոշիչ և ազդեցիկ գործոն են համարվում համաշխարհային տնտեսության ճարտարապետության առումով: Նավթի շուկայում առաջարկն ու պահանջարկն էական ազդեցություն ունեն արտահանող երկրների արժույթի փոխարժեքի վրա:

Ռուսաստանն արդյունահանում է մի քանի տեսակի հում նավթ՝ Urals, ESPO, Siberian Light, Sokol, Sakhalin, Arctic oil և Novy Port, սակայն հիմնական արտահանման խառնուրդը Urals-ն է, Արևելյան Սիբիր-Խաղաղ օվկիանոս (ESPO) խողովակաշարով մեծ ծավալով Ասիա է արտահանում նաև ESPO խառնուրդի հում նավթ:


Urals տեսակի նավթի գնագոյացումը փոխկապակցված է Brent տեսակի հում նավթի գնի հետ՝ որոշակի նվազեցումներով: 2022 թ. տարեվերջին նավթի գինը կազմել է 82,82 ԱՄՆ դոլար, իսկ տարեկան միջինացված մակարդակը՝ 100.93 ԱՄՆ դոլար 1 բարելի դիմաց: 2024 թ. սեպտեմբերին նավթի գինը նվազել է՝ հասնելով մինչև 69,49 ԱՄՆ դոլարի, սակայն նավթի ֆյուչերսները մեկ շաբաթվա ընթացքում աճել են ավելի քան 4%-ով՝ հասնելով 72,26 ԱՄՆ դոլարի, որը շաբաթական կտրվածքով ամենամեծ աճն էր ապրիլից ի վեր: 2024 թ. նոյեմբերի 4-ի դրությամբ 1 բարելի գինը կազմել է 74.89 ԱՄՆ դոլար²⁵: Անկախ գրանցված դրական զարգացումներից, որոնք ունեն կարճաժամկետ բնույթ, ընդհանուր առմամբ, նկատվում է նավթի գների նվազման միտում:

²² Տե՛ս **Pestova A., Mamonov M., Ongena S.**, նշվ. աշխ.:

²³ Տե՛ս **Савенкова Д., Милькин В.**, Экспорт нефти по трубопроводу «Дружба» в феврале снизился вдвое, 24 марта 2023, <https://www.vedomosti.ru/business/articles/2023/03/24/968071-eksport-nefti-po-truboprovodu>


²⁴ Աղբյուրը՝ Доля нефтегазового сектора в ВВП установила рекорд, Война санкций, 20 июля 2022, <https://www.rbc.ru/economics/20/07/2022/62d7d37a9a79475b6658bbe6>

²⁵ Տե՛ս Brent Crude – Historical Annual Data, <https://www.macrotrends.net/2480/brent-crude-oil-prices-10-year-daily-chart>




Գծագրատվեր 1. Ռուսական հանածո վառելիքի արտահանման շարժընթացը 2022–2024 թթ.՝ արժեքային արտահայտությամբ (եվրո)²⁵

²⁵ Կազմվել է Russia Fossil Tracker-ի տվյալների հիման վրա, <https://www.russiafossiltracker.com/>




Գծապատկեր 2. Ռուսական հանածո վառելիքի արտահանման շարժընթացը 2022–2024 թթ.՝ ծավալային արտահայտությամբ (տոննա)²⁶

²⁶ Կազմվել է նույն աղբյուրի տվյալների հիման վրա:



ա) մլն տոննա



բ) մլրդ եվրո

Գծապատկեր 3. Ռուսական հանածո վառելիքի արտահանման շարժընթացը 2022–2024 թթ.²⁷


²⁷ Կազմվել է նույն աղբյուրի տվյալների հիման վրա՝ ըստ հեղինակների կատարած հաշվարկների արդյունքների:

2022 թ. հունվարի 14-ից մինչև 2024 թ. դեկտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում ռուսական հանածո վառելիքի շարժընթացի ուսումնասիրությունը ցույց է տալիս՝ եթե արժեքային արտահայտությամբ արտահանման ցուցանիշների անկում է արձանագրվել ռուսական հանածո վառելիքի բոլոր տեսակների մասով (գծապատկեր 1), ապա արտահանման ծավալային ցուցանիշներն աննշան փոփոխության են ենթարկվել (գծապատկեր 2), այսինքն՝ փաստորեն, թեև ռուսական հանածո վառելիքի նկատմամբ պահանջարկը հարաբերականորեն կայուն է, սակայն ՌԴ-ի հանդեպ կիրառվող պատժամիջոցների հետևանքով էապես կրճատվել են դրանց արտահանման գներն ու վաճառքի արժեքային ծավալները:

Ռուսական հանածո վառելիքի արդահանման ծավալի և արժեքի փոփոխությունների անհամամասնություններն առավել ակնառու արտապարկերված են գծապարկեր 3-ում: Այսպես՝ 2022 թ. համեմատությամբ, ռուսական հանածո վառելիքի մի քանի տեսակների (հում նավթի, նավթամթերքի և քիմիական նյութերի, ածխի և հեղուկ բնական գազի) գծով մյն տոննաներով արտահայտված արդահանման ծավալների նույնիսկ որոշակի աճի պայմաններում (գծապարկեր 3. ա)) գրանցվել է արդահանման արժեքների անկում (գծապարկեր 3. բ)):


Որպես էներգետիկ անվտանգության սպառնալիք ընկալվող ՌԴ գազի, ածխի և նավթի ներկրումից կախվածությունը հնարավորինս շուտ վերացնելու (նույնիսկ դրանց դիմաց ավելի թանկ վճարելու գնով) ԵՄ երկրների մտադրությունն ակնառու կերպով արտացոլված է 1–3 գծապատկերներում:

Գծապատկեր 4-ում ներկայացված են Ռուսաստանի Դաշնությունից նավթ ներկրող երկրները՝ 2022 թ. ռուս-ուկրաինական պատերազմի մեկնարկից մինչև տարեվերջ և 2023 թ-ից մինչև 2024 թ. նոյեմբեր ժամանակային բաշխվածքով: Եթե 2022 թ. ռուսական նավթի խոշորագույն ներկրողը ԵՄ-ն էր (87.3 մլրդ եվրո), ապա 2023 թ-ից մինչ 2024 թ. նոյեմբերի 7-ն ընկած ժամանակահատվածում ԵՄ-ն գրեթե չորս անգամ կրճատել է ռուսական նավթի ներկրման ծավալը՝ հասցնելով մինչև 21.9 մլրդ եվրոյի: Ընդ որում, ԵՄ երկրների մի մասը գրեթե կամ իսպառ դադարեցրել է նավթի ներմուծումը ՌԴ-ից (Նիդեռլանդներ, Գերմանիա, Իտալիա, Լեհաստան), իսկ մյուս մասը՝ հասցրել է հնարավոր նվազագույնի (Ֆրանսիա, Իսպանիա, Բելգիա): Միաժամանակ, ի հակառակ սահմանափակող քաղաքականության, ԵՄ որոշ երկրներում նկատվել է ռուսական նավթի ներմուծման ավելացում: Այսպես՝ Սլովակիան և Հունգարիան 2022 թ. համեմատությամբ ավելացրել են ռուսական նավթի ներկրումները 48–50%-ով, մինչդեռ Բուլղարիան ռուսական նավթի ներկրումը սկսել է 2023 թ-ից և մինչև 2024 թ. նոյեմբերի 10-ը ներկրել է 2.4 մլրդ եվրո արժողությամբ ռուսական հում նավթ: Փոխարենը՝ ռուսական նավթի ներմուծման ծավալների նշանակալի աճ են ապահովել Չինաստանը, Հնդկաստանը և Թուրքիան, ինչի հաշվին չեզոքանում է ԵՄ-ի կողմից կիրառվող սահմանափակումների բացասական ազդեցությունը:




Գծապատկեր 4. Ռուսաստանից նավթի խոշորագույն ներկրողները (մլն եվրո)³⁰

³⁰ Կազմվել են հեղինակները Russia Fossil Tracker-ի տվյալների հիման վրա, <https://www.russiafossiltracker.com>



Գծապատկեր 5. Ռուսաստանից գազի խոշորագույն ներկրողները (մլն եվրո)³¹

³¹ Կազմվել են հեղինակները Russia Fossil Tracker-ի տվյալների հիման վրա, <https://www.russiafossiltracker.com/>



Գծապատկեր 6. Ռուսաստանից ածխի խոշորագույն ներկրողները (մլն եվրո)³²

³² Կազմվել են հեղինակները նույն աղբյուրի տվյալների հիման վրա, <https://www.russiafossiltracker.com/>

Գազի արդյունաբերությունը ևս առանցքային է Ռուսաստանի տնտեսությունում: Վառելիքի արտահանումը դրական ազդեցություն ունի երկրի բյուջեի եկամուտների վրա: Երկրի ներսում գազի ֆիկացման բարձր մակարդակը թույլ է տալիս արտադրել համեմատաբար ցածր գներով էլեկտրաէներգիա, ինչը հանգեցնում է լայնածավալ մուլտիպլիկատիվ տնտեսական էֆեկտի: ԵՄ պատժամիջոցների փաթեթը ներառում էր նավթավերամշակման արդյունաբերության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման արգելք: Ռուսական գազի մասնաբաժինը 2021 թ. կազմել է ԵՄ և Մեծ Բրիտանիա ներմուծման ծավալի 32,3%-ը: Միջազգային էներգետիկ գործակալության տվյալներով 2009 թ. (Ռուսաստանի և Ուկրաինայի միջև «գազային հակամարտության» ժամանակաշրջանն է) ռուսական գազի մատակարարման մասնաբաժինը 26%-ից աճել է՝ հասնելով մինչև 32,2%-ի: Ռուսաստանն աշխարհում երկրորդ խոշորագույն գազ արտադրող երկիրն է, որին բաժին է ընկնում գազի համաշխարհային արդյունահանման 18%-ը²⁹:

Գծապատկեր 5-ում ընդգրկված են ռուսական գազի խոշոր ներկրողները՝ ըստ գազի դիմաց վճարված գումարների:

Ռուսական գազի արտահանման համար ԵՄ-ն խոշորագույն շուկա է, ընդ որում, նույնիսկ 2023 թ.-ից էապես կրճատված ծավալով ԵՄ-ն, միևնույն է, մնում է առաջատարը, ինչը նշանակում է, որ ԵՄ շուկայի կորուստը Ռուսաստանի համար չի փոխհատուցվել այլ երկրներ գազի արտահանումների հաշվին: Թեև 2023–2024 թթ. որոշակիորեն ավելացել են դեպի Չինաստան (գազի արտահանումը Չինաստան աճում է «Գազպրոմի» և CNPC-ի միջև կնքված երկարաժամկետ պայմանագրի համաձայն), Թուրքիա, Ճապոնիա գազի արտահանման ծավալները, այդուհանդերձ, դրանք բավարար չեն ԵՄ շուկայի կորուստները ծածկելու համար:

Գծապատկեր 6-ում ներկայացված են Ռուսաստանի Դաշնությունից ածխի խոշոր ներկրողները: Ի տարբերություն նավթի և գազի շուկաների՝ ածխի շուկայում ներմուծման առաջնահերթություններն աննշան փոփոխությունների են ենթարկվել: Թեև ԵՄ երկրները 2023 թ.-ից ռուսական ածուխ այլևս չեն ներկրել (2022 թ. փետրվարի 22-ից մինչև տարեվերջ ԵՄ երկրները ներկրել էին 3.6 մլրդ եվրոյի գազ), սակայն, ի հաշիվ դեպի Չինաստան, Հնդկաստան և Թայվան արտահանումների ավելացման, Ռուսաստանն առանձնակի կորուստներ չի ունեցել ածխի արտահանման շուկայում, հատկապես որ ԵՄ-ն ի սկզբանե ռուսական ածխի ամենախոշոր ներկրողը չի եղել:

Ստեղծված իրավիճակը հանգեցրել է նաև արտարժույթի փոխարժեքի անբարենպաստ տատանումների: 2022 թ. փետրվարի 28-ին ռուբլու փոխարժեքը հասել է ռեկորդային ցածր մակարդակի՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ նվազելով մինչև 30%-ով, մինչդեռ Ռուսաստանի ԿԲ-ն ավելի քան կրկնապատկել է տոկոսադրույքները 9,5%-ից հասցնելով մինչև 20%-ի³³:


²⁹ Տե՛ս Гиваргизова Л., Влияние санкций ЕС на рынок газа РФ,

<https://russiancouncil.ru/blogs/lgivargizova/vliyanie-sanktsiy-es-na-rynok-gaza-rf/>

³³ Տե՛ս CNN Business, The list of global sanctions on Russia for the war in Ukraine, 2022,

<https://edition.cnn.com/2022/02/25/business/list-global-sanctions-russia-ukraine-war-intl-hnk/index.html>

Նավթի գների անկումը և տնտեսական պատժամիջոցները հանգեցրել են Ռուսաստանի տնտեսական աճի դանդաղեցման: Ընդհանուր առմամբ, 2021 թ. նավթագազային հատվածի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմել է 17,4%, իսկ նավթագազային հատվածի համախառն ավելացված արժեքի ծավալային ցուցանիշը՝ 108,2%: 2020 թվականի համեմատությամբ նավթի և գազի հատվածի տեսակարար կշիռը երկրի ՀՆԱ-ում աճել է 3,5%-ով³⁴:



Գծապատկեր 7. Ռուսաստանի Դաշնության ՀՆԱ և նավթի գների շարժընթացը 2013–2022 թթ.³⁵

Ինչպես երևում է գծապատկեր 7-ից, Ռուսաստանի ՀՆԱ-ն 2013–2016 թթ. կրճատվել է շուրջ 44%-ով՝ հասնելով 1.28 տրիլիոն ԱՄՆ դոլարի: Համաշխարհային տնտեսության և նավթի գների բարենպաստ աճի պայմաններում 2018 թ. ՀՆԱ աճի տեմպը 2016 թ. նկատմամբ արագացավ 23.1%-ով՝ 2017 թվականի 18.7%-ի համեմատությամբ: 2021–2022 թթ. ոլորտային սահմանափակումների պատճառով նկատվեց կտրուկ նվազում: 2022 թ. ՀՆԱ անկումը նախորդ տարվա համեմատությամբ կազմեց 17.4%: Տվյալ իրավիճակը պատժամիջոցների կիրառման հետևանք էր, թեև ՌԴ-ի նկատմամբ սահմանափակումներ կիրառող երկրները մեծ մասամբ փորձել են նավթային և գազային հատվածների վրա հնարավորինս քիչ ճնշում գործադրել, քանի որ մեծաքանակ նավթ են ներմուծում ՌԴ-ից:


Ռուսաստանի կենտրոնական բանկի ելակետային կանխատեսումներում տնտեսության վերադարձը դրական աճի տեմպերին ակնկալվում էր 2024 թվականից: Կարճաժամկետ հեռանկարում արտաքին առևտրի հոսքերի և ներդրումների սահմանափակումները կհանգեցնեն ՀՆԱ նվազմանը և ճնշում կգործադրեն տնտեսության վրա: Իրադարձությունները կարճաժամկետում, իրոք, բավական մեծ ազդեցություն են թողնում: Մեր կարծիքով՝ երկարաժամկետում դրական միտումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ ՌԴ-ն փորձի

³⁴ Статистическая служба государственной статистики, Росстат опубликовал информацию о доле нефтегазового сектора в ВВП России в I квартале 2022 года, 20 июля 2022, <https://rosstat.gov.ru/folder/313/document/174229>

³⁵ Статистическая служба The World Bank- GDP RF, https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG?end=2021&locations=RU&most_recent_value_desc=false&start=2013&view=chart (Accessed: 10.12.2024)


ամեն կերպ մեղմել իր դեմ կիրառված պատժամիջոցները, քանի որ վերացնել դրանք կարճաժամկետում պարզապես անհնար է:

Ստեղծված իրավիճակը չէր կարող չանդրադառնալ գնաճի տեմպերի արագացման վրա:



Գծապատկեր 8. ՌԴ գնաճի շարժընթացը 2021–2023 թթ.³⁷

Դիտարկվող ժամանակահատվածում Ռուսաստանում գների մակարդակի ամենաբարձր աճը գրանցվել է 2022 թվականի ապրիլին՝ 17,8%: Հաջորդող ժամանակահատվածում, կանխատեսումներին հակառակ, նկատվել է գնաճի տեմպերի դանդաղում և կայունացում, ինչը պայմանավորված է կապիտալի տեղաշարժի սահմանափակումներով և դրամավարկային բավականին կոշտ քաղաքականությամբ: 2024 թ. հոկտեմբերին ՌԴ-ում գնաճը կազմել է 8.54%:



Գծապատկեր 9. ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ ռուբլու փոխարժեքի շարժընթացը 2013–2024 թթ.³⁸

2014 թ., երբ առաջին անգամ ՌԴ-ի դեմ կիրառվեցին մասշտաբային սահմանափակումներ, անկում ապրեցին նավթի գները, և այս ամենի հետևանքով

³⁷ Տե՛ս Statista, Russia: Inflation Rate, <https://www.statista.com/statistics/276323/monthly-inflation-rate-in-russia/>


³⁸ Տե՛ս Exchange Rates, <https://www.exchangerates.org.uk/USD-RUB-spot-exchange-rates-history-2024.html>

2015 թ. ռուբլին ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվեց մոտավորապես 39%-ով, իսկ եվրոյի նկատմամբ՝ 35%-ով՝ համապատասխանաբար 1 ԱՄՆ դոլարի դիմաց դառնալով 61,22 ՌԴ ռուբլի, իսկ մեկ եվրոյի դիմաց՝ 67,96 ՌԴ ռուբլի: Ուկրաինայում բռնկված իրադարձություններից անմիջապես հետո ռուբլին կայծակնային արագությամբ անկում ապրեց՝ նվազագույն մակարդակի հասնելով 2022 թ. մարտի 11-ին, 1 ԱՄՆ դոլարի դիմաց՝ 120,37 ՌԴ ռուբլի, 1 եվրոյի դիմաց՝ 132,95 ՌԴ ռուբլի: Ինչպես երևում է գծապատկեր 9-ից, ՌԴ ռուբլին շարունակում է արժեզրկվել ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ:

ԿԲ տվյալներով՝ 2022 թ. մարտին ՌԴ քաղաքացիները բանկերից դուրս են բերել ավելի քան 1,2 տրիլիոն ռուբլի: Սա դրամական միջոցների ամենամեծ արտահոսքն էր 2008 թ. ճգնաժամից ի վեր: Այդ իրավիճակի պատճառով ԿԲ-ն ստիպված եղավ կրկնապատկել տոկոսադրույքները՝ հասցնելով մինչև 20%-ի, որն իր հերթին նպաստեց բանկերում ավանդների ավելացմանը: Մեկ շաբաթվա ընթացքում բանկերում ներդրվեց ավելի քան 3 տրլն ռուբլի ավանդ:

Ազգային արժույթի արժեզրկմանը զուգահեռ կարող է նվազել ապրանքների քանակը, որոնք ձեռք են բերվում ներմուծման միջոցով, կրճատվում է սպառողների գնողունակությունը, խաթարվում է ընկերությունների արտադրական գործընթացը:

Ֆինանսական ոլորտում մեծ հարված էր SWIFT համակարգի անջատումը: SWIFT-ն աշխարհում ամենամեծ միջազգային ֆինանսական փոխանցումների համակարգն է, որը թույլ է տալիս կատարել ֆինանսական արագ և անվտանգ փոխանցում մի երկրից մյուսը: Մի քանի բանկեր 2022 թ. ապրիլին զրկվեցին տվյալ ֆինանսական համակարգից օգտվելու հնարավորությունից³⁹: Մարտահրավերներն աստիճանաբար շատանում են, իսկ հնարավորությունները բավականին քիչ են:



Գծապատկեր 10. Օտարերկրյա ուղղակի ներդրումները ՌԴ-ում 2015–2023 թթ.⁴⁰

ՌԴ-ում սահմանափակումների մեջ են գտնվում Mastercard և Visa ամերիկյան վճարային համակարգերը, որոնցից օգտվում էր ՌԴ քաղաքացիների

³⁹ St'u Влияние санкций 2022 года на банковский сектор Российской Федерации, էջ 1–2:

⁴⁰ St'u World Bank, Foreign direct investment, net inflows (% of GDP), <https://data.worldbank.org/indicator/BX.KLT.DINV.WD.GD.ZS?end=2018&start=2008&view=chart>

մոտ 67%-ը: 2022 թ. մարտից հաճախորդներն այլևս չեն կարողանում օգտագործել իրենց ռուսական քարտերն արտասահմանում կամ միջազգային, այդ թվում՝ առցանց վճարումներ կատարել:

Հարվածի տակ է նաև ներդրումային ոլորտը, որը ցանկացած երկրի գրավչության ցուցիչն է: Մի խումբ խոշոր կազմակերպություններ հրաժարվել են ՌԴ-ում գործունեություն ծավալելուց: Դեռևս 2020 թ. COVID-19 համավարակի հետևանքով ՕՈւՆ-ի հոսքերը դեպի ՌԴ կրճատվեցին գրեթե 70%-ով: 2021 թ. գրանցվեց կտրուկ աճ՝ հասնելով 38,2 միլիարդ ԱՄՆ դոլարի (2020 թ. 10,4 միլիարդ ԱՄՆ դոլարի համեմատությամբ):

Այնուամենայնիվ, 2022 թ. դիտվում էր կտրուկ անկում: Ներդրումների ներհոսքի կրճատումն ուղեկցվում էր ներդրումների արտահոսքով, ինչը պայմանավորված էր արևմտյան տարբեր ընկերությունների գործունեության դադարեցումով և ռուս գործարարների կողմից ակտիվները երկրից դուրս բերելու գործընթացներով: Ռուսաստանում դադարել են գործել և ներդրումներ կատարել նաև մի շարք IT կազմակերպություններ (Amazon Web Services, Apple, Google, IBM, Intel, Microsoft, Uber և այլն): Շուկայում նման մեծ խաղացողների կորուստը կարող է հանգեցնել տեխնոլոգիական ճգնաժամի, սակայն հարկ է նշել, որ այս կազմակերպությունները նույնպես կորցրել են մեծ սպառողական շուկա: Այս դեպքում միգուցե երկարաժամկետում կարողանան վերականգնել իրենց շուկան, իսկ Ռուսաստանն իրավիճակը կարողանա հաղթահարել միայն կարճաժամկետում⁴¹: Մեր կարծիքով՝ նվազման միտումը կպահպանվի, իսկ հետևանքները կարող են լինել ծայրահեղ ծանր:

Առանձին ներդրողներ այն երկրներից, որոնք կախվածություն չունեն Միացյալ Նահանգներից, օրինակ՝ Քաթարը, Սաուդյան Արաբիան, ընդլայնում են համագործակցությունը Ռուսաստանի հետ: Այդ երկրների հետ մի շարք նախագծերի իրականացման վերաբերյալ պայմանավորվածություններ են ձեռք բերվել: Սա նշանակում է, որ արտասահմանյան երկրները պատրաստ են խափտել ամերիկյան և եվրոպական ֆինանսական պատժամիջոցները՝ իրենց շահերից ելնելով⁴²: Դա ենթադրում է էական ճշգրտումներ արտաքին վարկերի ներգրավման ռուսական քաղաքականության մեջ՝ Ռուսաստանին հնարավորություն ընձեռելով հիմնականում ազգային արժույթներով համատեղ նախագծերի վարկավորման փոխընդունելի այլընտրանքներ գտնելու՝ միաժամանակ նվազեցնելով ճնշումը Միացյալ Նահանգների կողմից:


Ռուսաստանի գլխավոր տնտեսական գործընկեր է դառնում Չինաստանը: Ըստ չինական վիճակագրության՝ 2022 թ. առաջին ութ ամսում Չինաստանի ներդրումները ՌԴ-ում կազմել են 450 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճելով շուրջ 150%-ով: Չինաստանից Ռուսաստանն ուղղակի ներդրումների մոտ կեսը (46%) ներդրվում է անշարժ գույքի ոլորտում (993 մլն ԱՄՆ դոլար), 9%-ը՝ շինարարական ոլորտում (203 մլն ԱՄՆ դոլար): 2022 թ. Չինաստանից Ռուսաստանի արևելքում

⁴¹ St'u Companies Are Getting Out Of Russia, Sometimes at a Cost, <https://www.nytimes.com/article/russia-invasion-companies.html>

⁴² St'u Пластинова И. Н., Влияние финансовых санкций на привлечение иностранных инвестиций в российскую экономику, 2019, էջ 119-120, <https://mgimo.ru/upload/iblock/016/vliyanie-finansovyh-sankcij-na-privlechenie-inostrannyh-investicij-v-rossijskuyu-ehkonomiku.pdf>

ներդրումների ծավալը գերազանցել է 13 մլրդ ԱՄՆ դոլարը⁴³: Ակնհայտ է, որ Ռուսաստանի և Չինաստանի միջև առկա է «միանշանակ ուժեղ փոխգործակցություն»:

Միջազգային առևտուրը համարվում է ցանկացած երկրի շարժիչ ուժը, դրա կրճատման կամ բացակայության դեպքում երկիրը կանգնում է մեծ ֆինանսական ճգնաժամի առաջ: Պատժամիջոցներն ազդում են ոչ միայն նախաձեռնող երկրների հետ արտաքին առևտրի, այլ նաև երրորդ երկրների հետ առևտրի վրա, որոնք փորձում են զգուշանալ Ռուսաստանի հետ տնտեսական հարաբերություններից՝ Արևմուտքի կողմից երկրորդական պատժամիջոցների սպառնալիքի պատճառով:



Գծապատկեր 11. ՌԴ արտահանման և ներմուծման շարժընթացը 2018–2024 թթ. (մլրդ ԱՄՆ դոլար) ⁴⁴

Գծապատկեր 11-ում ներկայացված է ՌԴ արտահանման և ներմուծման շարժընթացը 2018–2024 թթ., 2024 թ. ցուցանիշն ընդգրկում է 3-րդ եռամսյակի տվյալը: 2022 թ-ից ներմուծումն ու արտահանումը նվազել են, վերջինն առավել կտրուկ անկում է արձանագրել: Միաժամանակ, կրճատվել է երկրի դրական առևտրային հաշվեկշիռը. եթե 2022 թ. արտահանումը ներմուծումը գերազանցել է 2.3 անգամ, ապա 2023 թ.՝ ընդամենը 1.5 անգամ: Ռուսաստանի արտահանումը 2023 թ., նախորդ տարվա համեմատությամբ (2022 թ.՝ 592.1 մլրդ ԱՄՆ դոլար), կրճատվել է 28.3%-ով՝ հասնելով 424.5 մլրդ ԱՄՆ դոլարի, ինչը, սակայն, անհամեմատելի է COVID-19 համավարակով պայմանավորված անկման հետ: Ներմուծման ծավալների անկումն առավել զուսպ է:

Այս ամենի վրա էապես ազդում են տարբեր ընկերությունների հետ ՌԴ համագործակցության դադարեցումը, գների աճը, երկրորդային պատժամիջոցների սպառնալիքը և ներդրումների կրճատումը: ՌԴ-ն, կարելի է ասել, ներդրողների համար դադարեց լինել գրավիչ և ապահով երկիր: Այս հանգամանքը տևական ժամանակ ՌԴ-ին զրկում է միջազգային առևտրում խոշոր խաղացող լինելու հնարավորությունից:


⁴³ St'u В РАСПП назвали перспективные отрасли для китайских инвестиций в России, «Известия», 16 февраля 2023,

<https://iz.ru/1471244/2023-02-16/v-raspp-nazvali-perspektivnye-otrasli-dlia-kitaiskikh-investitsii-v-rossii>

⁴⁴ St'u Trading Economics: Russia Exports and Imports,

<https://tradingeconomics.com/russia/exports>, <https://tradingeconomics.com/russia/imports>

Այդուհանդերձ, գործող սահմանափակումների պայմաններում Ռուսաստանը լքած մի շարք ապրանքատեսակների գծով պահանջարկն ակտիվորեն բավարարվում է դրանց զուգահեռ ներմուծման միջոցով: Զուգահեռ ներմուծումը ենթադրում է ապրանքների ներմուծում՝ առանց իրավատիրոջ համաձայնության, ինչը ՌԴ-ին թույլ է տալիս ներմուծել որոշակի ապրանքներ, մասնավորապես՝ դեղագործական, խոշոր և փոքր տեխնիկա, էլեկտրոնիկա, մեքենաներ և այլն՝ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի բացակայությամբ և առանց վերջինիս համաձայնության:



Գծապատկեր 12. ՌԴ բարձր տեխնոլոգիական և գիտաբար արդյունաբերության արտադրանքի մասնաբաժինը ՀՆԱ-ում⁴⁵

Ինչպես երևում է գծապատկեր 12-ից, ՌԴ տեխնոլոգիական և գիտատար արդյունաբերությունը 2020 թ. բավականին մեծ կշիռ է ունեցել ՀՆԱ-ում. 2019 թ. համեմատությամբ աճել է 2.3 տոկոսային կետով: Այս աճը կարելի է բացատրել COVID-19 ճգնաժամով, երբ թվայնացումը դարձավ կարևոր և առաջնային ցանկացած ոլորտում: Այնուհետև նկատում ենք անկում. հատկապես 2022 թ., 2020 թ. համեմատությամբ, նվազել է մինչև 21%-ով: Վիճակագրությունը վկայում է, որ ՌԴ-ն սկսում է բարձր տեխնոլոգիական արտադրության կարիք զգալ: Երկարաժամկետ հեռանկարներում այս պատժամիջոցները լրջորեն կազդեն նաև Ռուսաստանի աճի հեռանկարների վրա: Ներկայում բարձր տեխնոլոգիաները համարվում են հաջող տնտեսություն ունենալու բանաձևի բաղկացուցիչ մաս. առանց այս բաղադրիչի զարգացումը դատապարտված է անհաջողության: ՌԴ-ն որոշ ժամանակ անց կարող է դադարել ժամանակակից տնտեսություն լինելուց:

Ինչպես պարզ դարձավ, սահմանափակումներն ազդել են ՌԴ ֆինանսական հատվածի և արժեթղթերի շուկայի, արտահանման և ներմուծման, միջազգային պահուստների վրա, իսկ համաշխարհային ընկերությունները զանգվածաբար լքել են Ռուսաստանը: Արտաքին մարտահրավերներին ավելացել են նաև ներքին մարտահրավերները: Ստեղծված բարձր ռիսկայնության և վատատեսական սպասումների հորձանուտում ՌԴ բոլոր կառույցները փոր-

⁴⁵ Банки и экономика в цифрах и графиках, с. 46,
https://asros.ru/upload/iblock/bba/ocml7fo052bc7tvsotmfchd70a0l6flz/Banki-i-ekonomika_2022-1_2_.pdf

ծում են արագ և արդյունավետ արձագանքել անընդհատ փոփոխվող իրադարձություններին:

Ռուսաստանը մեծապես կախված է բարձր տեխնոլոգիական ապրանքների ներմուծումից. ներմուծումը տարեկան կազմում է մոտավորապես 19 միլիարդ ԱՄՆ դոլար: Ամենամեծ մասնաբաժինը (45%) ԵՄ-ինն է, 21%-ը՝ ԱՄՆ-ինը, 11%-ը՝ Չինաստանինը, 2%-ը՝ Մեծ Բրիտանիայինը: 2019 թվականին միջուկային տեխնոլոգիաների ներմուծման մեծ մասը կատարվել է ԵՄ-ից (68%)⁴⁶: ԵՄ-ն նաև ՌԴ կենսատեխնոլոգիայի, էլեկտրոնիկայի և շատ նորարարական արտադրանքների մատակարարն է: Ակնհայտ է, որ նշված բոլոր երկրները ՌԴ-ի դեմ պատժամիջոցներ սահմանող երկրներն են: Ռուսաստանը փորձել է դիմակայել տեխնոլոգիական պատժամիջոցների ներմուծման արգելքներին դրանց փոխարինման միջոցով, սակայն մեծ հաջողություններ չի ունեցել: Բարձր տեխնոլոգիական ապրանքների սահմանափակումների ազդեցությունը որոշ ոլորտներում արդեն իսկ զգացվում է:

Եզրակացություն: Ռուս-ուկրաինական հակամարտությունը զանգվածային ցնցումներ է առաջացրել համաշխարհային տնտեսությունում: Ուկրաինան և Ռուսաստանն ահռելի վնասներ են կրում, բայց հետևանքները դուրս են գալիս այս երկրների սահմաններից: Ապրանքային շուկաների և մատակարարման շղթաների խափանումներն ազդում են երկրների մակրոտնտեսական և ֆինանսական կայունության, աճի վրա՝ ավելի բարդացնելով այն երկրների սոցիալ-տնտեսական վիճակը, որոնք դեռ լիովին չեն ազատվել COVID-19 համավարակի հետևանքներից:

Պատժամիջոցների ազդեցությունը երկարատև է լինում, եթե չիրականացվեն կանխող գործողություններ, իսկ երկարաժամկետում ԵՄ-ն և այլ երկրներ կարող են գտնել լուծումներ, բայց Ռուսաստանի տեխնոլոգիական և նորարարության ոլորտն ամբողջովին կախված է այդ երկրներից: Ռուսաստանը պետք է փորձի երկրում խթանել ինովացիոն ոլորտը՝ տարբեր ծրագրեր իրականացնելով առաջին հերթին երիտասարդ բնակչության շրջանում:

Ռուսաստանի տնտեսությունը 2022 թ. պատժամիջոցների պատճառով բախվել է մի շարք մարտահրավերների: Արտասահմանյան բիզնեսների դուրսբերումը երկրից, հիմնական արտահանումների արժեքի անկումը, արժեթղթերի շուկայի կրճատումը, փոխարժեքի անկանոն վարքագիծը, գործազրկության աճը և վարկային շուկայի «կաթվածահարումը» դարձել են ՌԴ տնտեսության հիմնական մարտահրավերները:

Ամփոփելով կատարված վերլուծությունը՝ կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական փակուղիները, որոնց բախվում է ՌԴ տնտեսությունը: Միաժամանակ, յուրաքանչյուր փակուղու համար ուղենշվել է դրա հաղթահարմանն ուղղված միջոցառումների առաջարկվող շրջանակը:

1. Կրիտիկական ներմուծման ապահովում

Արտասահմանյան ընկերությունների զգալի մասի դուրսբերումը ՌԴ-ի ծառայությունների և ապրանքների շուկայից, մասնավորապես՝ տրանսպոր-

⁴⁶ St'ru Bruegel, The EU without Russian oil and gas, 2022, <https://www.bruegel.org/2022/04/the-eu-without-russian-oil-and-gas/>

տային ոլորտից, կարելի է որակել որպես սպառողների իրավունքների խախտում, քանի որ դա ուղղված է ոչ թե ՌԴ կառավարությանն ու կազմակերպություններին, այլ ՌԴ քաղաքացիներին (խոչընդոտվում է այնպիսի ապրանքների մատակարարումն, ինչպիսիք են՝ բժշկական սարքավորումները, սննդամթերքը կամ դրանց արտադրությանն անհրաժեշտ հումքը և այլն): Այս մարտահրավերի պատասխանը հայելային սկզբունքով անցումն է փոխադարձ մատակարարման սահմանափակումների: Սա ենթադրում է, որ ոչ բարեկամական երկրներ Ռուսաստանից կարևորագույն ապրանքների արտահանման նախապայմանը (էներգիա, մետաղներ, հանքային պարարտանյութեր և այլն) պետք է լինի ներմուծվող ապրանքների փոխադարձ մատակարարումների պահպանումը: Նման իրավիճակում, ի թիվս այլ միջոցառումների, Ռուսաստանի արձագանքը պետք է լինի տեղական արտադրության խթանումը, միաժամանակ բազմազանեցված մատակարարման շղթաների զարգացումը Չինաստանի, Հնդկաստանի, Իրանի և ԲՀՌԶԱ անդամ այլ գործընկեր երկրների հետ փոխգործակցության խորացման ճանապարհով:

2. Արտաքին առևտրային գործառնությունների գծով հաշվարկներ կատարելու անհնարինություն

ԱՄՆ-ի կողմից ռուսական բանկերի արտասահմանյան հաշիվների սառեցումը, ԵՄ-ի կողմից նմանատիպ գործողությունների իրականացման հնարավոր ռիսկը կարող են հանգեցնել դոլարի և եվրոյի գոտիներում արտաքին առևտրային հաշվարկներ իրականացնելու անհնարինության: Միաժամանակ, կապիտալի վերահսկողության ներդրման արդյունքում, ռուսական ռուբլին համաշխարհային կապիտալի շուկայում դարձել է գրեթե անփոխարկելի արժույթ, ինչը դժվարացնում է ռուբլով արտաքին առևտրաշրջանառության սպասարկումը:

Կարճաժամկետ հեռանկարում այս մարտահրավերի հաղթահարումը հնարավոր է իրականացնել տեղական արժույթով հաշվարկների հնարավորությունների ավելացմամբ՝ զարգացնելով տարածաշրջանային և ոչ դոլարային ֆինանսական մեխանիզմները, ինչը հնարավոր է, օրինակ՝ ներմուծման դիմաց վճարելով խոշոր նավթագազային արտահանողի կամ հատուկ ստեղծված ինստիտուտի արտասահմանյան հաշվից: Ուժեղ առևտրային հաշվեկշռի պահպանումը թույլ կտա ապահովել ներմուծողների պայմանագրերի ֆինանսավորումը «նավթային դոլարներով», որոնք կուտակվում են այդ հաշվի վրա: Այս սխեմային զուգահեռ, կարելի է կատարել ոչ դոլարային գործարքներ Չինաստանի, Հնդկաստանի, Իրանի և այլ շահագրգիռ երկրների հետ: Միևնույն ժամանակ, ստեղծված իրավիճակում Ռուսաստանը կարող է նվազեցնել կախվածությունը միջազգային վճարային համակարգերից՝ թվային արժույթների կիրառման ընդլայնմամբ:

3. Ռուբլու փոխարժեքի ցնցումներ, որոնք խթանում են բարձր գնաճը

Պարբերաբար տեղի ունեցող արտաքին ցնցումները հաճախ ուղեկցվում են արժույթի նկատմամբ չափազանց մեծ պահանջարկով: Ռուբլու լրացուցիչ սպեկուլյատիվ թուլացումը սրում է գնաճային գործընթացները: Իրավիճակի մեղմումը հնարավոր է ֆինանսական կարգավորման գործիքակազմի ընդլայնմամբ և ռուբլու նկատմամբ հասարակական վստահության բարձրացմամբ:

4. Ներմուծման փոխարինման անհրաժեշտություն

Ապրանքային հոսքերի սահմանափակումը կտրուկ մեծացնում է ներմուծմանը փոխարինող նախագծերին աջակցելու անհրաժեշտությունը: Ներմուծման փոխարինման համար Ռուսաստանն ունի բոլոր անհրաժեշտ պայմանները՝ վառելիք, էներգիա, մետաղներ, քիմիական պարարտանյութեր, տարբեր կլիմայական պայմաններում առկա գյուղատնտեսական հողեր և բարձր որակավորում ունեցող մասնագետներ: Իսկ տեխնոլոգիաների փոխանակման նպատակով երկիրը կարող է ընդլայնել փոխգործակցությունը բարեկամական երկրների հետ: Ճիշտ է, խնդիրը մասամբ լուծվում է նաև զուգահեռ ներմուծումների շնորհիվ, սակայն ոչ բոլոր ապրանքների դեպքում է ներմուծման նմանօրինակ սխեման կիրառելի:

Ընդհանուր առմամբ, կիրառված բոլոր սահմանափակումները մեծաձավալ են և ունեն իրենց ազդեցությունները, սակայն եթե Ռուսաստանը կարողանա հնարավորինս մեղմել կիրառված պատժամիջոցները և հակադարձել դրանց, միգուցե շատ կարճ ժամանակահատվածում կարողանա ավելի ամրապնդել դիրքերը և գրանցել աճ որոշ ոլորտներում: Ռուսաստանը կարող է օգտագործել սեփական ներուժը և հաղթահարել այս իրավիճակը, քանի որ ռեսուրսային հարուստ երկիր է, խնդիրների լուծման ձևերը տարբեր են, իսկ հնարավորությունները՝ մեծ:

Օգտագործված գրականություն

1. Աղաբեկյան Է., Պատերազմ ու պատժամիջոցներ. ռուսաստանյան արժեթղթերի շուկայի արձագանքն իրավիճակին, «Ամբերդ» տեղեկագիր, 2024/3, DOI: 10.52174/2579-2989_2024.3-20, էջ 20–32, <https://asue.am/upload/files/amberd/2024-year-3/3.pdf>
2. АО «Эксперт РА», Итоги банковского сектора за 1-е полугодие 2022 года: к чему приведет трансформация? https://www.raexpert.ru/researches/banks/bank_1h2022/
3. Влияние санкций 2022 года на банковский сектор Российской Федерации.
4. Мюнхау В., Энергетический кризис: простого выхода нет. М., 29.09.2022, <https://globalaffairs.ru/articles/energeokrizis-vyhoda-net/>
5. Гиваргизова Л., Влияние санкций ЕС на рынок газа РФ, <https://russiancouncil.ru/blogs/givargizova/vliyanie-sanktsiy-es-na-rynok-gaza-rf/>
6. Доля нефтегазового сектора в ВВП установила рекорд, Война санкций, 20 июля 2022, <https://www.rbc.ru/economics/20/07/2022/62d7d37a9a79475b6658bbe6>
7. Дубинин С.К., Финансовая система под давлением санкции: логика противостояния // Россия в глобальной политике. Т. 20. No. 5. 2022. DOI: 10.31278/1810-6439-2022-20-5-168-187, С. 168–187, <https://globalaffairs.ru/articles/logika-protivostoyaniya/>
8. Известия, В РАСПП назвали перспективные отрасли для китайских инвестиций в России, 16 февраля 2023,

- <https://iz.ru/1471244/2023-02-16/v-raspp-nazvali-perspektivnye-otrasli-dlia-kitaiskikh-investitsii-v-rossii>
9. Пахлян А.А., Экстремизм в мировой экономике: жизнь, «погруженная» в санкции // «Амберд» бюлетень, № 5(18), 2022, с. 78-89, DOI: 10.52174/2579-2989_2022.5-78, <https://asue.am/upload/files/amberd/2022-year-5/10.pdf>
 10. Пластонова И.Н., Влияние финансовых санкций на привлечение иностранных инвестиций в российскую экономику, 2019, с. 119-120, <https://mgimo.ru/upload/iblock/016/vliyanie-finansovyh-sankcij-na-privlechenie-inostrannyh-investitsij-v-rossijskuyu-ehkonomiku.pdf>
 11. Савенкова Д., Милькин В., Экспорт нефти по трубопроводу «Дружба» в феврале снизился втрое, 24 марта 2023, <https://www.vedomosti.ru/business/articles/2023/03/24/968071-eksport-nefti-po-truboprovodu>
 12. Федеральная служба государственной статистики, Росстат опубликовал информацию о доле нефтегазового сектора в ВВП России в I квартале 2022 года, 20 июля 2022, <https://rosstat.gov.ru/folder/313/document/174229>
 13. Чэньюй Ф., У России появилась хорошая возможность сбалансировать свою экономику. М., 19.05.2022, <https://globalaffairs.ru/articles/sbalansirovat-ekonomiku/>
 14. Bachmann R., Baqaee D., Bayer C., Kuhn M., Löschel A., Moll B., Peichl A., Pittel K. and Schularick M. (2022), What if? The Economic Effects for Germany of a Stop of Energy Imports from Russia, ECONtribute Policy Brief No. 028.
 15. Brent Crude – Historical Annual Data, <https://www.macrotrends.net/2480/brent-crude-oil-prices-10-year-daily-chart>
 16. Bruegel, The EU without Russian oil and gas, 2022, <https://www.bruegel.org/2022/04/the-eu-without-russian-oil-and-gas/>
 17. Can Sanctions Really Stop Putin? The New York Times, April, 2022,
 18. CNN Business, The list of global sanctions on Russia for the war in Ukraine, 2022.
 19. Companies Are Getting Out Of Russia, Sometimes at a Cost, <https://www.nytimes.com/article/russia-invasion-companies.html>
 20. Exchange Rates, <https://www.exchangerates.org.uk/USD-RUB-spot-exchange-rates-history-2024.html>
 21. Hakhverdyan D., Pakhlyan A., Coordinated Sanctions in the Orbit of Transformation of the Global Economy / International Conference Materials “Priorities and challenges of economic development”, Yerevan 2024, pp. 21-36, <https://asue.am/upload/files/science/ASECU-git.pdf>
 22. IEA (2022), Energy Fact Sheet: Why does Russian oil and gas matter? IEA, Paris, <https://www.iea.org/articles/energy-fact-sheet-why-does-russian-oil-and-gas-matter>, Licence: CC BY 4.0
 23. IEA (2024), Average Russian oil exports by country and region, 2021-2023, IEA, Paris, <https://www.iea.org/data-and-statistics/charts/average-russian-oil-exports-by-country-and-region-2021-2023>, Licence: CC BY 4.0
 24. International Banker, Sanctions notwithstanding, Russia’s economy continues to outperform, 31.10.24,

- <https://internationalbanker.com/finance/sanctions-notwithstanding-russias-economy-continues-to-outperform/>
25. International Monetary Fund. 2024. World Economic Outlook: Policy Pivot, Rising Threats. Washington, DC. October, 156 p.
 26. Natural Resources, Economy of Russia, <https://www.advantour.com/russia/economy/natural-resources.htm>
 27. Pestova A., Mamonov M., Ongena S., The price of war: Macroeconomic effects of the 2022 sanctions on Russia/ 15 April 2022, <https://voxeu.org/article/macroeconomic-effects-2022-sanctions-russia>
 28. Russia Fossil Tracker, <https://www.russiafossiltracker.com>
 29. Russia Sanctions Dashboard, <https://www.castellum.ai/russia-sanctions-dashboard>
 30. Russia: Economic Report, <https://www.worldbank.org/en/country/russia/publication/rer>
 31. Statista, Russia: Inflation Rate, <https://www.statista.com/statistics/276323/monthly-inflation-rate-in-russia/>
 32. The Word Bank- GDP RF, [https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG?end=2021&locations=RU&most recent value desc=false&start=2013&view=chart](https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG?end=2021&locations=RU&most%20recent%20value%20desc=false&start=2013&view=chart)
 33. Trading Economics: Russia Exports and Imports, <https://tradingeconomics.com/russia/exports>.

АННА ПАХЛЯН

Старший исследователь исследовательского центра «Амберд» АГЭУ,
кандидат экономических наук, доцент

АНУШ АНАНЯН

Доцент кафедры международных экономических отношений АГЭУ,
кандидат экономических наук

АНАИТ ЕНГИБАРЯН

Студентка 2-го курса магистратуры учебной программы
«Таможенное дело» АГЭУ

Россия и экономические санкции: текущие реалии и перспективы. – Начало российско-украинской войны имело ощутимые последствия для России, ЕАЭС, ЕС и мировой экономики в целом. Последствия можно считать двусторонними.

В современных условиях экономические санкции являются важным инструментом внешней политики. Санкции оказали долгосрочное влияние не только на торговый оборот России, но и на всю экономику. В краткосрочной перспективе ограничения внешнеторговых потоков и инвестиций оказывают давление на российскую экономику.

При этом, санкции имеют двусторонний эффект. Российская Федерация имеет достаточно большой потребительский рынок, в результате санкций многие структуры, покинувшие это государством, теряют большой потребительский рынок, а значит, также имеют сокращение прибыли.

Обострение российско-украинского конфликта очень быстро изменило все планы и политику, связанные с энергетической сферой ЕС. Поэтому Россия должна быть готова к молниеносным переменам в любой момент. Страна должна искать альтернативы рынкам ЕС, чтобы иметь возможность сохранить и увеличить динамику экспорта нефти и газа.

В рамках статьи были изучены санкции, оценено их влияние на российскую экономику, в результате выявлено, с какими “тупиковыми” ситуациями столкнулась Российская Федерация.

Ключевые слова: импорт, экспорт, валютный курс, санкции, энергоносители, тупик

JEL: E60, O10

DOI: 10.52174/29538114_2024.3-71

ANNA PAKHLYAN

*Senior Researcher at ASUE "Amberd" Research Center,
PhD of Economics, Associate Professor*

ANUSH ANANYAN

*Associate Professor of the Department of International Economic Relations
ASUE, PhD of Economics*

ANAHIT YENGIBARYAN

*2nd year student of the ASUE "Customs Administration"
Master's Educational Program*

Russia and Economic Sanctions: Current Realities and Prospects.– The outbreak of the Russian-Ukrainian war had tangible consequences for Russia, the EAEU, the EU and the global economy in general. The damage can be considered bilateral.

In modern conditions, economic sanctions are an important tool of foreign policy. Sanctions have had a long-term impact not only on Russia's trade turnover, but also on the world economy. In the short term, restrictions on foreign trade flows and investments put pressure on the Russian economy.

At the same time, sanctions have a two-way effect. The Russian Federation has a fairly large consumer market, and as a result of sanctions, many organizations that have abandoned this

state, lose a large consumer market, and therefore experience a reduction in profits.

The escalation of the Russian-Ukrainian conflict very quickly modified all plans and policies related to the EU energy sector. Therefore, Russia must be ready for rapid changes at any time. The country must look for alternatives to EU markets in order to maintain and increase the dynamics of oil and gas exports.

The article examines the sanctions, assesses their impact on the Russian economy, and reveals the deadlocks they have placed Russia in.

Keywords: *import, export, exchange rate, sanctions, energy, deadlock.*

JEL: E60, O10

DOI: 10.52174/29538114_2024.3-71